ՀՀ Սյունիքի մարզի «Քարաշենի Լ.Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
Խմբակավար՝ Ռուզաննա Ասատրյան

«ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ
ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑԻ 7-8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Տրամաբանություն» խմբակի ծրագիրը ներկայացված է աղյուսակի տեսքով: Աղյուսակները կազմված են հետևյալ բաժիններից՝

1. Թեմայի անվանումը, ժամաքանակը
2. Նպատակները
3. Խնդիրները
4. Վերջնարդյունքները
5. Բովանդակությունը

Ծրագրում առանձնացված են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների հետաքրքրություններին ու պահանջմունքների բավարարմանը:

Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական առաջին կիսամյակի համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, կարողությունների,տրամաբանության, մտքի ու հմտությունների զարգացման վրա:

«Տրամաբնություն » խմբակի
ԾՐԱԳԻՐ
(շաբաթական՝ 1 ժամ, առաջին կիսամյակ՝ 14 ժամ)

Տրամաբանական հետաքրքրաշարժ խնդիրներ 6 ժամ
Նպատակը
• Տրամաբանական և ալգորիթմական մտածողության ձևավորում և զարգացու • Թվի գաղափարի համակարգված զարգացում, թվաբանական գործողություններ կատարելու բանավոր ու գրավոր հմտությունների ձևավորում • Գործնականում, համակարգչային ծրագրերում և հարակից առարկաներու կիրառվող մաթեմատիկական գիտելիքների և հմտությունների զարգացում
Խնդիրներ
Տրամաբանական խնդիրներ լուծման համար մշակել ժամանակակից մեթոդներ և մեթոդական հնարքներ, որոնց կիրառությունը արդյունավետ է սովորողների տրամաբանական մտածողության զարգացման համար և իրենց գրավչության և մատչելիության շնորհիվ խթանել սովորողների հետաքրքրությունը խնդիրների լուծման գործընթացի նկատմամբ:
Վերջնարդյունքներ

Տրամաբանելով և կիրառելով տարբեր մեթոդներ, լուծել տարբեր բարդության աստիճանի խնդիրներ:Ներկայացնել առաջադրված խնդրի լուծման հնարավոր մի քանի եղանակներ:
Բովանդակություն
1.Հետաքրքրաշարժ խնդիրներ ՏՀՏ-ի կիրառմամբ (2 ժամ) 2.Մաթեմատիկական հնարքներ (1 ժամ) 3. Թվային լաբիրինթոս (1 ժամ) 4. Բարդ ինտելեկտուալ թեստեր (2 ժամ)

Տրամաբանական տեքստային խնդիրներ
Նպատակը
• Որոշումներ կայացնելու, սեփական և ուրիշների դատողություններին քննադատաբար վերաբերվելու, խմբում աշխատելու կարողությունների ձևավորում • Դիտարկելու, կռահելու, եզրակացություններ անելու կարողությունների ձևավորում • Ինտուիցիայի, ապացուցման հմտությունների ձևավորում ու զարգացում
Խնդիրներ
Հասկանալ և մեկնաբանել խնդրի պահանջները, պարզ եղանակով լուծել առաջադրված խնդիրը, բանավոր հաշվարկներ կատարել,համագործակցային մեթոդներով աշխատել:
Վերջնարդյունքներ
Ինքնուրույն տրամաբանական խնդիրներ կազմել, դատողություններ կատարել, խմբակային աշխատանքներում ակտիվություն ցուցաբերել:Ունենալ սեփական ուժերի նկատմամբ վստահություն, լեզվաբանական և ալգորիթմական մտածողություն, ինքնուրույն աշխատելու ունակություն:
Բովանդակություն
1.Տեքստային խնդիրներ տոկոսի վերաբերյալ (1 ժամ) 2.Տեքստային խնդիրներ աշխատանքի և շարժման վերաբերյալ (2 ժամ) 3.Տեքստային խնդիրներ (Լ. Ֆ.Մագնիցկիի «Թվաբանությունից») (1 ժամ) 4.Հնագույն հետաքրքրաշարժ տեքստային խնդիրներ (2 ժամ) 5.Երկրաչափական պատկերների կիրառությամբ տրամաբանական խնդիրներ (2 ժամ)

Հաշվետվություն

Կհասնենք այն արդյունքին, որ սովորողները կկարողանան վերլուծել, մեկնաբանել, տրամաբանել և լուծել տրամաբանական տարբեր բարդության խնդիրներ:

Կծանոթանան տարբեր մաթեմատիկական մեթոդների և հնարքների:

Կկարողանան հասկանալ օլիմպիական դժվարին խնդիրներ, խնդիրների լուծման նոր եղանակներ մշակել, դիտարկել լուծման հնարավոր բոլոր դեպքերը, ընտրել լուծման օպտիմալ տարբերակը, բանավոր բարդ հաշվարկներ կատարել: